

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻՍ

Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "

ՍՐՏԱՍՏԱՐԱՆ

Երկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանշարն տողը
20 սանդիկ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Հ Ա Ս Յ Է

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չեմ տրոշիր

ՔԱՆԻ ՍԸ ՎԱԼԻՆԵՐ

Թուրք թերթերը Մայիս 18ին հաղորդեցին թէ Ն. Վանս. Ֆարիֆաշա, Տիգրանակերտի նոր վաւին, Մէսսաթէօի Մառիթիմի Օռքէկալ շողենաւով մեկնած է դէպի Սամսոն, ուրկէ պիտի երթայ իր պաշտօնատեղին. նաւ նստելէ առաջ կայսերական պալատ գնաց հրաժեշտ տալու համար. Հաւանական չէ որ իր վեհափառ տէրը աւոր խորհուրդ տուած ըլլայ դարմանել իր նախորդի, Քեաւմիլ պէյի, վարչութեամբը առաջ եկած չարքերը:

Ասիական առաջին կարգի աւազակ մը, աւարադու մը և ի պատեհ առթի մարդասպան մըն էր. ասոր դէմ Ճէզիրէցիները միաձայն բողոքեցին. նա սքանչելի կերպով կը համաձայնէր կարաւաններու մեծ կողպատիչ Մուստաֆա փաշային հետ, որ մասնաւոր բաւելեալ է չորրորդ բանակին հրամանատար Ջէզիր փաշային: Խաւիտ պէյի ետ կոչուիլը շնորհաւորելի ըլլալու բնաւ բնոյթ չունի:

Ասով հանգերձ, իր յաջորդը պէտքը չունէր Համիդէն մանրամասն հրահանգներ առնելու. այս գիտակցութեամբ էր որ Ն. Կ. Վ. իր ծառայութեանը կոչեց և զանի դուրս հանեց քաջաւած կեանքէն ուր կը մնար 10 տարիներէ ի վեր: Ֆարիֆ փառաբարգոյն պիտի ըլլայ քան զՔեաւմիլ:

Ալպանացուց միաբանութեան և Բրէզընի համաժողովին ատեն, երբ Տէրփիշ փաշա դրամով և չահաբեր պաշտօններու բաշխումով Ալպանիոյ մէջ տեսակ մը օրինապահութիւն հաստատեց դէպի Սուլթանի գահը, Ֆարիֆ փաշա Սելանիկի քաղաքապետութեան նախագահն էր: Երկու հազար լիրա պախիշի մը միջոցաւ Բրիտանիայի միւլթէսարիֆ անուանուեցաւ, յետոյ Բրիտանիայի և անկէ յետոյ ալ Սկիպի, վերջապէս Մանասի Վալիի և զաւ:

Այս զանազան պաշտօններուն մէջ, իր վրայ դրուած յոյսերը իրականացուց: Ինք անձամբ խումբեր կը պատրաստէր և զանոնք

կարճակէր երկրին մէջ. յետոյ երբ բաւական դատէր անոնց աւարներ, ըրով բեռնաւորուիլը, վերջ կուտար անոնց քաջագործութեանց և իր այդ անձնական ծառաները կը զրկէր կայսերական բանտերէ: Մինչև որ անոնցմէ փրկանքի կարելորդ գումար մը չը ստանար զաւորները ազատ չէր ձգէր: Չափը անցուց, հիւպատոսները բողոքեցին և պէտք եղաւ որ Համիդ վանի պաշտօնէ հանէր:

Այն ատենէն ի վեր Ֆարիֆ ճշմարտութեամբ կապէր, պալատին արբանեակներուն մէջ ընդունուած էր ի շնորհս խելացի առատաձեռնութեանց և արգիւնաւոր բարեկամութեանց: Չը պիտի ուշանայ իր քսակէն ծախած դրամները Տիգրանակերտի Հայերէն վերստաւանալու:

Միմիայն անգլիական դեսպանը Բ. Դրան յիշեցուց Ֆարիֆ փաշայի անցեալը. միւս դեսպանները բողոքելէ ըստ ամենայնի զգուշացան նկատելով թէ միջամտութիւնը բանի մը չը պիտի ծառայէ, ինչպէս որ Հալէպի վալի Էնիս փաշայի պաշտօնի մէջ մնալուն դէմ ընդունայն բողոքած էին:

Էնիս փաշա, Տիգրանակերտի ջարդերուն հեղինակը—ուր, ըստ Ֆրանսայի հիւպատոս Մ. Մէյ-ոսիէի վկայութեան, երեսուն հազար մեռան քաղաքին եւ շրջակայ գիշերորդն մէջ—Հալէպի վալի անուանուեցաւ, քիչ մը Պոլիս մնալէ վերջ: Հինգ տարիէ ի վեր հիւպատոսական մարմնոյ անդամները կը մերժեն անոր հետ ունէ պաշտօնական յարաբերութեան մտնել: Բայց այս բոլորը չը կրցին զանի իր գործելու եղանակէն ետ կեցընել:

Սակայն քիչ մը անհանգիստ եղաւ այն վարկեանին, յորում Այնթապի մէջ կոտորած մը պատրաստած էր և իր ծրագրիւր ժամանակին իմացուելով, քանի մը ֆրանսական պատերազմական նաւեր երեւցած էին Կիլիկիոյ եզերքները, այս երեւումը զանի մտածման ենթակեց:

Այն ատեն միտքը դրաւ ուրիշ հնարք մը. և քանի մը վաշխառուներու հետ ցորենի մենավաճառ

ին ձեռնարկեց, վանի մէջ գործադրուած գրութեամբ, ահաւասիկ հինգ տարիներէ ի վեր, սոսկալի սով մը առաջ բերած էր: Հալէպի բնակիչները չը հանդուրժեցին, բողոքեցին, կողպատեցին հացագործներու խանութները և պէտք եղաւ զինուորական ուժի Ալի փաշայի հրամանատարութեամբ զանոնք հանդարտեցնելու համար:

Բաղէշի վալին Հիւսնի պէյ կը շարժի իր արժանաւոր պաշտօնակից խալիտի, Ֆարիֆ և Էնիսի Մանաւանդ Սղերդի կողմը իր ջանքը ի գործ կը դնէ և սովորականէ դուրս բան մը չէ որ հոնկէ կարելորդ ջարդի մը լուրը կաւորուի:

Քիւրտերը կըսեն թէ Սուլթանին մէջ հրովարտակը Հայերը կոտորել կը հրաւիրէ, ինչպէս 1895ին և 1896ին և Սղերդի մեծ Շէյխը ֆէրիս մը տուած է ըսելով թէ այն ամենը որ իսլամութիւնը ընդունելէ վերջ քրիստոնէութեան կը վերադառնան պէտք է իրենց կեանքովը տուեն իրենց այդ ըմբոստութիւնը: Պէտք գիւղին քիւրտերը անկէ օգտուելով զանազան բռնաբարութիւններ ըրած են: Նոյնիսկ Սղերդի շուկային մէջ, կէս օրին, երկուսուսարդ քիւրտ մը դաշոյնի չորս հարուածներով 95 տարեկան Մինաս Համասեան ծեր մը զարկաւ և դիակը փռեց: Հիւսնի պէյի ստորագրութեամբը՝ որ գէպքը իմացան, զգուշացան անհանգիստ ընելէ երկուսուսարդ քիւրտը. չէ՞ մի որ սա հաճելի գործ մը կատարած էր իրենց տիրոջ և Համիդ էֆէնտիի, իրենց տիրոջ տէրոջ:

Այսպէս նորագոյն ընտրութիւններով, էն գէշ ոճրագործները պաշտօնի մէջ պահուիլով, 1895ին նման կոտորածի ուղղակի հրաւերով, Սուլթանը բաւական յստակօրէն կիմացնէ թէ կուչէ վերսկսիլ և լնցնել անկատար մնացած գործը:

Այժմ ժամանակն է ուր իր օգնականները սպանութեանց կը սկսին: Յունիսէն Նոյնմբեր ճամբաները ազատ են լեռնադաշտերուն վրայ, ազատ համիտիյէ սպանիչներուն համար, նոյնիսկ Հայերուն համար որոնց, բոլոր եղանակին մէջ, արգիւնած է չըլազայիլ:

Չը պիտի գտնուի Եւրոպայի մէջ կառավարութիւն մը, բաւական մալ դասէր, Սուլթանը նոր ոճրագործութիւններէ արգիւնու համար:

(Բո Արմէնիա) Բիւթ Բիւթ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒՂՄԱՐԶՔ

Սօֆիայի մէջ վերջին անցուցարձեւը որչափ հետաքրքրական նոյնքան տարօրինակ են: Մեր նախորդ թուով հաղորդեցինք մեր ընթերցողաց նախարարապետ Մ. Տանէվի Սօպրանիէի մէջ արտասանած վերջին ճառին: Էն շահեկան ճառը, Նախարարապետը Մականացուց մասին իր բռնելիք քաղաքականութիւնը պարզելով, հաւատացնել ուզեց թէ ինք կը յուսայ որ, եթէ Մականցուական գոմիթէն զուրկ և յեղափոխական խումբերու երթեկէ կը արգիւնուի, Սուլթանի կառավարութիւնն ալ կը բարեհաճի երկրին մէջ բարենորոգում մտցնել:

Մենք գիտենք թէ ամեն լրջախոհ ու փորձառու անձնաւորութեանց ինչպէս նաեւ Մ. Տանէվի անձնական համոզումը այն է որ թուրք կառավարութիւնը, մանաւանդ Սուլթան Համիդի կառավարութիւնը, բնաւ ինք իր կամովը մազի չափ բարեկարգութիւն ընելու ոչ միտում ունի և ոչ ձեռնհասութիւն: Բայց Մ. Տանէվ գիտակցաբար այս սին յոյսով կը սկսի այսօր օրօրել իր ազգակիցները, նոյնիսկ իր անձնական համոզումին հակառակ. որովհետեւ վերէն, Բեդրասպուրկէն, իրեն այդպէս հրահանգուեցաւ:

Չարի կառավարութիւնը չուզէր որ իր քաղաքական հաշիւներուն անձեռնտու մէկ միջոցին Պալքանեան փոքրիկ պետութիւնները իրենց զլխուն գործ մը կատարեն, և միեւնոյն ատեն անկեղծ փափաքով չէ որ այդ փոքրիկները բաւելեալական ամուր կապերով իրարու հետ կապուին: Այս ճշմարտութեան ահա վերջին մէկ ապացոյցը: Պալքար և Սերպ Ժողո-

վերջը իրենց կառավարութիւններով, հազիւ անցեալ թշնամու թիւներուն վրայ թանձր վարագործ մը ձգած, եղբայրական փոխադարձ գգուանքներու սկիւսած էին, երեսփոխաններու և ուսանողներու փոխադարձ այցելութեանց համար ժամագրութիւններ կորոչուէին. յանկարծ Ֆիրմիլեանի մը խնդրով Ռուսական մատը այդ ամէնը տակն ու վրայ բրաւ որովհետեւ կրնար այս երկու ազգին սերտացումը Մակեդոնական խնդրոյն համար զիրենք համաձայնութեան մը բերել, որուն շնորհիւ, առանց Ռուսիոյ ուղղակի ազդեցութեանը պէտք ունենալու, թուրքին հետ հաշուաւարդարութեան մը գալ, և ապագային հաւանականաբար նոր Սթամպուլի ներու երեւումով մը Պալատին փոքրիկները ձեռք ձեռքի տուած ռուսական ազդեցութիւնը բոլորովին վանէին:

Բեդրասպուրկի պետական շրջանակներու մէջ այս հեռապատկերը կանխատեսուած ըլլալով, հոն մեծ աշխարհութեամբ կը հետեւին որ Պալատեան փոքրիկները միմիայն ռուսական զսպանակէն մղուին և զանոնք իրարու կապող թելերու ծայրերը Չարի կառավարութեան ձեռքին մէջ գտնուին, որ ուզած ատենը իրար մօտեցնէ և անջատէ:

Պոլկարիոյ նախարարապետը իր Բեդրասպուրկ տուած վերջին այցելութեամբը ինքզինք ստիպուած զգաց Ռուսիոյ այդ քաղաքական հոսանքին անձնատուր ըլլալու, և հակառակ իր անձնական համոզումներուն, հակառակ իր ազգակից Մակեդոնացիներու ակնկալութեանց և անոնց անտանելի կացութեան դարմանումի սնհրաժեշտ ու անմիջական պէտքին, սկսեց օրօր կարգաւ, յուսադրելով որ Սթամպուլի կառավարութիւնը երբ տեսնէ թէ Մակեդոնացիները իրենց վիզը Մուհամէտի հաւատաց-

եալներուն եւսքաղանքին կենթարկեն հրու կերպով, կը բարեհաճի Բարենորոգումները գործադրել, ինքզինքն...

ԳՈՒՐԴԵՐ

ՊԱՐՍԻՑ ԺԱՅՆ ԵՒ ՆԱԽԵՐԸ

Ինչպէս արդէն հաղորդած ենք, Պարսից Շահին Բագուէ անցած միջոցին, տեղւոյն Հայերուն կողմէ պատգամաւորութեան մը ներկայաւնալը: Այդ առթիւ պատգամաւորութեան խօսած ճառը և Շահին ու Սատրապին տուած պատասխանները հետեւեալ կերպով կը հաղորդեն ռուս թերթերը.

Ձերդ մեծութիւն: Բագուի հայ հասարակութիւնն արժանացրել է մեզ ձեր Բագու գալը ողջունելու բարձր պատուի: Բաղդաւոր լինելով եւ պարծենալով, որ այսպիսի մի յանձնարարութիւն ունինք, մենք խնդրում ենք ձերդ մեծութեանն ընդունել մեր ամենաանձնական ողջոյնները: Վաղուց սովոր լինելով տեսնելու յանձին ձերդ մեծութեան մի իմաստուն եւ մեծանորի պետի, որը Հայրական խնամածութեամբ է վերաբերուած մեր հասարակից պարսկապատակ Հայերին, որոնք, այդ խնամածութեան շնորհիւ, նոյնպիսի անդորրութիւն են վայելում, ինչ որ եւ մենք ռուսաց պետութեան հզօր հովանու տակ, մենք ազգովում ենք Ամենաբարձրիւն, որ նա զօրութիւն տալ Պարսկաստանում ապրող մեր հաւատակիցներին արժանի լինելու ձերդ մեծութեան բարձր վրաստանութեան: Թող Աստուած երկար տարիներ պարգևէ ձերդ մեծութեանը, երջանիկ եւ խաղաղ կեանքի երկար տարիներ, պայծառ, անմալ եւ փառաւոր թագաւորութեան երկար տարիներ:

Այս ճառին Շահը մօտաւորապէս հետեւեալը պատասխանած է.

Ես Հայերը շատ կը սիրեմ, մանաւանդ իմ հայ հպատակներս: Անոնք իրենց աշխատասիրութեամբ եւ անձնուիրութեամբ կատարեալապէս արժանի են իմ հողածութեանս: Ես անոնց համար միշտ հոգածու եղած եմ եւ մասնաւորապէս այսուհետեւ ալ պիտի հո-

գամ: Շատ շնորհակալ եմ Բագուի Հայոց բարեմաղթութեանց համար:

Թիտոյ պատգամաւորութիւնը Սատրապին զիմեւ է հետեւեալ ճառով:

Մենք հէնց իմ շնորհակալութիւն յայտնեցինք նորին մեծութեանը Պարսկաստանում ապրող մեր հայ եղբայրներին ցոյց տուած խնամածութեան համար: Մենք գիտենք, որ նորին մեծութիւնն այդ գործում միշտ կատարեալ աջակցութիւն է գտել ձերդ բարձր գերազանցութեան կողմից, ուստի եւ խնդրում ենք ընդունեցէք մեր յարգական շնորհակալութիւնը:

Սատրապը պատասխանած է թէ ինք միշտ մասնաւոր ուշադրութիւն դարձուցած է Հայոց վրայ և թէ նոյն կերպով զանոնք իր ուշադրութեան տակաւ պիտի ընէ ասկէ յետոյ ալ:

ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ ՓՈԽԱՂԻՈՒԹԻՒՆԸ

Սանասարեան Վարժարանի Խնամալութիւնը գումարուեցաւ երէկ (4 Մայիս) Ղալաթիոյ Խորհրդարանը, նախագահութեամբ Ս. Պատրիարք Զօր: Ներկայ էին Խնամալութեան վեց անդամներն աւագը Վ. Վան: Տեսար. Գաբրիէլ էֆ. Նորատունկեան, Աբիկ էֆ. Ունձեան, Պատրիկ էֆ. Կիւլպէնկեան, Գրիգոր էֆ. Կիւլպէնկեան, Գեորգ էֆ. Ասլանեան եւ Վահան էֆ. Էսաբեան: Սոյն նստին ներկայ գտնուեցաւ նաեւ Սանասարեան Վարժարանի Տեսուչներէն Գեորգ էֆ. Աբուլեան, որ վարժարանը Խորհրդ փոխադրելու անպատեհութեանց վրայ իր կարծիքներն յայտնեց: Ըսաւ թէ իրենք պատրաստ են ծառայել ուր որ կոչուին երթալ, նոր եւ վերջնական շէնքին համար պատրաստուած յատակագիծն ալ շատ լաւ է, որովհետեւ իրենք հիմա կը նկատեն տեղւոյ համար, բայց իրենց պարտքն է յիշեցնել թէ՛ զանազան պատճառներով՝ փոխադրութիւնը կարծուածին չափ զրկուին գործ մը չէ: Կարնոյ ցորեկօթիկ 60 աշակերտներէն պիտի զրկուին, զի չի յուսացուիր որ Խորհրդ քաղաքէն զուրս տեղ մը ցորեկօթիկ կարենան ունենալ: Եւ Խորհրդը երթալով նոր

գիշերօթիկ չպիտի շահին: Վերջերս իրենց գիշերօթիկներուն, պակսելու ոչ թէ կարնոյ զրկելն պատճառաւ էր այլ ծնողաց արեւտրական կամ դրամական անձկութեան բերմամբ: Փոխադրութեան անմիջական ծախքն ալ 1,000 լիւրայէն պակաս պիտի չըլլայ, զոր Խնամալութիւնն անշուշտ դրամագլխէն պիտի վճարէ, քանի որ այնքան մեծաքանակ ծախք մը տարեկան եւմտացոյցին վրայ չի կրնար բարդուիլ: Այս ամէն առարկութիւնները մի առ մի քննեց Վան: Դաւրիէլ էֆ. Նորատունկեան, որ իր պաշտօնակիցներուն պէս, համոզուած է տեղափոխութեան օգուտին՝ իրեն մնայուն կարգադրութիւն: Ի վերջոյ որոշուեցաւ որ ճարտարապետ Մելիստոսեան էֆ. առաջիկայ շաբաթ օրը մեկնի Պոսէն, Սամսոնի ճամբով Խորհրդը երթալու համար, ճամբան քննելով շէնքին համար երկաթ, քար եւ առողջեցէն հայթայթելու պայմաններ, եւ Խորհրդի մէջ ռուսումնասիրելով Սորսուրի վանքին շրջակայքն ու քաղաքին պայմանները՝ ճարտարապետական տեսակէտով, եւ բերուելիք տեղեկագրին վրայ տալ վերջնական որոշումը: Նաեւ որոշուեցաւ հարցնել Կարնոյ Գաւառային Վարժարանի թէ վերջնապէս ինչ են իրենց պայմանները, արդի շէնքը Սանասարեանի ձեռքը թողելու համար: Հետեւեալէս, Սանասարեան Վարժարանին Խորհրդ փոխադրուելուն վրայ վճարական որոշումն երկու ամիսէն առաջ չկրնար տրուիլ:

Բիւզանդիոն

ԿՏՐՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆ

ՇՈՒՄԼԱ, 7 Մայիս

Սրբազան պարտականութիւն մըն է բարեխաղ մարդու բնաւորութիւնը, կըսէ Ռիշնիցի, որն ուրիշ բանով չըլլար, բայց ինքն իստեղով, բացառելով եւ վերջապէս միջաւայրի պարագաներուն վրայ ազդելով, սակայն կան մարդիկ, որոնց բնաւորութիւնը ոչ մի բանով չէ կարելի բարեփոխել, այսպիսիներ գիտական լեզուի մէջ, բառին յոռի նշանակութեամբ կը կոչուին «անորմալ մարդիկ»: Յոռի անորմալ մըն որքան ալ խօսիք ու բացատրէք, ինչ միջաւայրի մէջ ալ զնէք, անիկա իր գիտցածը կընէ, իր

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (21)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆՁԻՆՆԵՐ

Վանի Այգեքստան կոչուած արուարձանին մէկ անշուք թաղին մէջ միայրկ տուն մը կար: Այս տունը փայտաշէն էր եւ ետին ընդարձակ դետին մը ունէր, որուն ծայրը կը վերջանար Ակոբի Բարեբու առջին:

Կէս օրուան մօտ էր:

Տունին մէջ երեք մանկամարդ աղջիկներ կային, որոնք ճաշելու նստած էին ցածուկ սեղանի մը շուրջը: Պառաւ կին մըն ալ կար, որ զբաղած էր կերակուրներ պատրաստելու եւ այս երեք դեռահաս աղջիկներուն առջին զննու:

Այս դեռափթիթ աղջիկներէն մին՝ Լուսիա էր, մին ալ Լաւիզար, իսկ միւսը՝ Տիւլար, որ Մէլիքի աղջիկն էր:

Ճաշէն ետքը սենեակ մը քաշուելով սկսան խօսիլ:

— Ո՛հ, անուշ քուրիկներս, մերս մընջից մանկատի Տիւլար. չեմ մոռնար ձեզ: Ամեն ժամանակ ձեր վրայ պիտի մտածեմ: Աստուծոյ ուրիշ բան չպիտի ուզեմ, միայն ձեր ողջութիւնը:

— Հայպ, ըս'յոս, ընդհատեց Լուսիա: Մենք ալ քեզի չենք մոռնար: Մենք ալ քու վրայ պիտի մտածենք: Եւ մեր աղօթքներուն մէջ ամէն ատեն Աստուծոյ պիտի ուղեմք որ օր մը կարենանք զիրար տեսնել: Ես եւ քուրս Լաւիզար քեզի միշտ պիտի յիշենք:

— Այո, պիտի յիշեմ քեզի, որովհետեւ զուն իմ անցեալս գիտես, Տիւլար, զուն իմ արցունքներս տեսած եմ, կրկնեց Լաւիզար: Այսօր որչափ որ կը բաժնուինք իրարմէ,

որչափ որ զուն շատ կը հեռանաս մեր քովէն, բայց մեր սիրտը, մեր կարօտը քու հետը կը տանիս: Ա՛խ, եւ րանի՛ քեզի որ հօրդ քովը կերթաս, երանի՛ քեզի որ ազատ աշխարհի մը մէջ ազատ օր մը կը տեսնես:

Այս արտածմիկ ու անկեղծ խօսակցութիւններով ժամանակ կանցունէին երբ տունին պատուր եկաւ իմացուց թէ գեղացի քահանայ մը կայ վարը, որ կուզէ Տիւլարը տեսնել:

— Գեղացի քահանայ մը... մերս մընջից Լուսիա:

Ու շուտով մը տունին մասանը պահեց Տիւլարն ու Լաւիզարը, մինչեւ որ այդ քահանային զիտաւորութիւնը հասկնար:

Թետոյ սրահն իջաւ Լուսիա, ուր կըսպասէր Գահանայ մը, որ մեր ծանօթ Տէր Կարապետն էր:

— Ողջո՛յն, աղջի՛կս, մրմռած Գահանան իր աչքը սուր հոտառութիւն մը ունեցող շուներն պէս չորագին պատցնելէ ետքը:

— Օրհնեցէ՛ք, Տէր հայր, մրմնջեց

Լուսիա եւ ծոցեցաւ անոր աջը համբուրեց:

— Աս ի՞նչէ... միշտ'կ էք հոս տեղ:

— Ո՛հ, միշտակ չեմ: Այս տունին մէջ պառաւ կին մըն ալ կայ:

— Ուրի՛շ:

— Ուրի՛շ մէկը չունիմ:

— Ինչպէ՛ս կ'ըլլայ այդ... իմացա՞ծիս նայելով այս տունին մէջ Ա... գեղէն աղջիկ մը կը բնակի եղբր երկու ամիսէ ի վեր: Ես այդ գեղի քահանան ըլլալուս, անգամ մը պարտք համարեցի տեսնել զինքը:

— Դուք այդ գեղին Տէր Կարապետ Գահանան էք, հարցուց Լուսիա հետաքրքրական ձայնով մը:

— Այո, աղջի՛կս, պատասխանեց Գահանան՝ աչքին տակէն անոր դէմքը զիտելով: Լսած էիք անունս:

— Լսած էի:

— Վայ, ուսկի՞ց լսած էիք:

— Իմ Մեծ-հօրմէս, Տէր հայր, որովհետեւ Փերիզակութիւն կընէ գեղերու մէջ եւ գիտէ եկեղեցականներու անունները:

— Թողունք ատիկա. հիմակ ըսելէ

ըսածը կը կրկնէ ու առիթ կը փնտռէ, ապա կ'սկսէ անոր հետ խօսակցել, իր կ'ընկերացնէ յազուրդ տալ:

Ահա՛ ձեզ արհեստի Շուրջայի Պ. Վասակ Սիւնին, որքան կուզէք խօսեցէք անոր, ինչ եղանակով կուզէք բացատրեցէք, դուք չ'ըսէիք յաջողիք սակայն զայն ուղղել, անիկա անուղղայ է եւ իր գիտածէն—իմաստակութենէն—մարդ չ'ուի չ'ընդերս Վարկան մը կ'ընդունի ըսածնիդ ու կը հաստատէ, բայց քիչ մը վերջը կը հերքէ, կամ ուզելով հերքել կ'ընայ քանգագուշանաց մէջ, կը խօսի, կը գրէ, բայց ո՛չ ըսածէն եւ ո՛չ ալ գրածէն բան մը կը հասկցուի, փաստ կուզէք, կարգադրէ 413 թիւ 7... ի մէջ «Վկայականին արժէքը» խորագրին տակ Վասակի մեզ գէտ գրած վերջին երկայնապատում յօդուածը:

Այս գրութեան մէջ, գիւղի մը միջնակարգ վարժարանի աշակերտ Պ. Վասակ կը ընդունի թէ՛ Ուսումնական խորհուրդը, որ եւ է անձի ուսուցչական ձեռնհասութեան վկայական տալու համար, եւ թակային ուսմանց վիճակացոյցը աչքէ կ'անցնէ, պաշտօնական ձեւակերպութիւններ կը կատարէ, քիչ մը նկատողութիւններ կ'ընէ ու յետոյ վկայական կուտայ: Այս ամենը կընդունի Պ. Վասակ, բայց իր իմաստակութիւնը նուիրագործելու համար ձողովարանի թիւններով կը ձգտի գիտակից պաշտօնական մարմիններու վկայութիւնները բոլորն ալ առ ոչինչ համարել, առանց գիտնալու որ իր միջնակարգ վարժարանի փոքրիկ զուլայով, կուգայ հասնիլ կեդր. Ուսումն. խորհուրդը քննադատելու տխրաւորութեան ամենաթանձր աստիճանին:

Ըսինք եւ կը կրկնենք—առանց նորանոր մանրամասնութիւններու մէջ մտնելու—որ ուսուցչի վկայական տալու համար, ներկայացուցինք մեր ուսմանց եւ պաշտօնավարութեանց վկայագիրները, որոնք լիովին քաւարաւորութիւն տուին Ուսումն. խորհուրդի պահանջներուն, եւ որոնց վրայ հիմնուելով Ուսումն. խորհուրդը տուաւ մեզ «Վկայագիր ուսուցչական ձեռնհասութեան», վաւերացեալ Ազգ. Պատ. բարձրագոյնէն եւ Վ. Պոլսոյ պուլկարական դահլիճարիայէն:

Այսօր ի ձեռին ունիմ այդ վկայականը, որը վաղուց ներկայացուցած եմ ուր որ անկ է, բայց եթէ կուզէ Պ. Վասակ ինքն ալ տեսնել, մենք պատրաստ ենք ցոյց տալ եւ իրեն, պայմանաւ որ ինքն ալ բարեհաճի իր

միջնակարգ վարժարանի հսկայ ? վիճակացոյցը մէջտեղ դնել: Բացի այդ մենք ցոյց կուտանք նաեւ մեր ուսմանց վկայականը, այն պայմանաւ որ Պ. Վասակ ակնոցները վար առնէ ու այնպէս դիտէ, որպէս զի ըստնէ թէ՛ սխալ են մեր մասին առած «ստուգապատում տեղեկութիւնները»: Այս մասին առ այժմ այսքան:

Գալով վարժարաններու կանոնաւոր յառաջադիմութեան հարցին, իբրեւ ուսուցչի, համեստութիւնը չ'ընդունաւ լազրիք ինչ մասին, այսինքն մեր գործունէութեան վրայ խօսիլ, գնահատման այդ պարտականութիւնը կը ծանրանայ կրթական պաշտօնական մարմիններու վրայ, անոնց ըսածը միայն—հակառակ Պ. Վասակի կարծիքին—հիմք եւ արժէք կ'ընայ ունենալ, թէեւ հոգաբարձութիւնը լուծուած է եւ առհասարակ էֆէնտին ապօրինի կերպով հրաժարած է իր պաշտօնէն, սակայն շեռ կ'անգուն են ազգին եւ վարժարաններու շահերը պաշտպանող ուրիշ պաշտօնական մարմիններ, զեռ կ'անգուն է Շուրջայի ազգային բոլոր գործերը ղեկավարող Պատ. Թաղականութիւնը, որու մէջ բարեբաղդաբար, միջնակարգ վարժարանի աշակերտ, Պ. Վասակէն անհամեմատ աւելի հանրային վարժարանական գործերէ հասկցող անհատներ կան, եւ որոնք ուսուցչինը պաշտպանելու, անոնց մասին ներքոյներ կարգաւորուելու է թագուն նպատակ չ'են կրնար ունենալ, քանի որ ուսուցչինը կ'այսօր այստեղ, վաղը մի ուրիշ տեղ են:

Ահա՛ մի կտրուկ պատասխան, ահա՛ մի մեղմ գրութիւն, ահա՛ եւ փաստեր, տեսնենք սակայն մեր Պ. Վասակը ուղիք պիտի գայ, չ'ենք կարծիր, որովհետեւ ինչպէս փորձերը ցոյց կուտան, անիկա խօսուածներուն մասին ընկող, գրուածները կարգաւորով չ'ըզատատանար, անիկա այնպիսի իմաստակ մըն է, այնպիսի անորմալ մըն է, որն ուղղութեան բերելու համար ուրիշ միջոցներ են հարկաւոր:

ԱՍԼԱՆ ՏՈՒԿԱՆ

Յ. Գ. — Վերապահութեամբ բեմ նաեւ որ, զեռ վկայական չ'առացած, այդ մասին Պ. Վասակ Սիւնի գրած է Պոլսոյ եւ ի միջի այլոց իմացուցած է Ուսումնական խորհուրդին, թերեւ նաեւ Մէարիֆին թէ՛ ո՛վ կամ ինչ պարագաներու տակ մեկնած եմ Պոլսէն... Այս սա չար նախանշն ու անհատական շահը, տեսէք թէ՛ ինչե՛ր ընել կուտայ մարդոց: Նոյն

Մէկ օրինակ ալ ուղարկուած է Շ...ին:

ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ

Պարահանդէսի եւ երկու ներկայացման տրուած ի նպատակ Ազգային Երկես Վարժարանաց ֆ. Պոլսոյ

ՀԱՍՈՑԹՔ	Լեվ Սն.
Պարահանդէս (9 փետրուար 1902) 133 տոմսերու փոխարժէք, 10 լէվէն	1330.—
Նուէր Ն. Ա. Բ. Պուլկարիոյ իշխանէն	100.—
Նուէր 59 զանազան անձնաւորութիւններէ	306.95
Ա. Ներկայացում (2 Մարտ 1902) վաճառուած զանազան տոմսերու փոխարժէք	688.—
Բ. Ներկայացում (24 Մարտ 1902) վաճառուած զանազան տոմսերու փոխարժէք	572.85
Նուէր զանազան անձնաւորութիւններէ	15.—
	3012.80

ԾԱԽՔ	Լեվ Սն.
Պարահանդէս (9 փետր. 1902)	
Պարահանդէսի վարձք	50.—
Նուագածուաց խմբին	70.—
Նուագածուաց խմբին ըմպելիք եւ կերակուր	13.60
300 քարթօն եւ սպագորութիւն	22.50
Զայտարարութեան համար	5.50
10 ֆուտ մոմ	7.45
Արդ ու զարդ	17.50
Նուէր եւ զանազան ծախքեր	16.45
Ա. Ներկայացում (2 Մարտ 1902) Թատերասրանի վարձք	50.—
Տոմսերու եւ յայտարարութեանց սպագորութիւն	22.—
Նուագածուաց խմբին	80.—
Բեմական զարդարանք	5.—
Վէսէլլօ խմբին վճարուած	95.—
Բեմական եւ յայտարարութեան վրէժները ցրուելու համար	75.—
Ապտիկ տոմս մը	2.—
Բ. Ներկայացում (23 Մարտ 1902) Թատերասրանի վարձք	55.—
Զանազան ծախքեր	18.20
Վէսէլլօ խմբին եւ նուագածուաց	120.—
Զուտ հասոյթք պարահանդէսէ	1533.95
» » Ա. Ներկայացումէ	493.39
» » Բ. »	394.65
	3012.80

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեւանէ կը գրեն.

«Մ'օտ օրերս մեր քաղաքի եւ շրջակայ գիւղերի Թուրքահայ գաղթականները, շատ քչերի բացառութեամբ, երգում տուին եւ ընդունեցին ուսահպատակութիւն նրանց բնակութեան տեղերն առ այժմ որոշուած չ'են. սպասուած է նոր կարգադրութեան մինչեւ ամսոյ վերջը: Լուում է, որ պէտք է տեղափոխեն Ռուսիայի ներքին նահանգները եւ Սիբիր»:(.)

— Պատրիարքարանի մէջ խորհրդակցութիւն կը կատարուի կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան վրայ, Տ. Յակոբ Աշոտ Եպիսկոպոսի տեղ ուրիշ մը պատուիրակ յշանակելու համար:

— Մշոյ Ս. Կարապետ վանքի վերաշինութեան յատկագրի մեղույն վրայ պատրաստուելով զրկուած է քննութեան համար:

— Սամսոնի եկեղեցւոյն շինութեան համար 1,600 լիրա գումար մը հանգանակուած է Շինութեան յատկագրի մը Պոլսոյ կը զրկուի հարկ եղած արտօնութիւնը կառավարութենէն ստանալու համար:

— Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը պաշտօնագրով մը ինքրած է Պատրիարքէն որ Ս. Յակոբայ Որբանոցէն ելնելիք այս տարուան շրջանաւարտները իրենց փափաքին համեմատ կայս. Հիւանդանոցէն—տուփ գլուխ հինգ զուլայ մասին այժմէն հարկ եղած կարգադրութիւնը ըլլուի:

— Ազգ. Հիւանդանոցի սեփական սիկարի Թուղթի ներկայ տարւոյ Մարտ ամսուան հասոյթը, բաղդատմամբ նախորդ ամիսներուն աւելի ցոյց տրուած է, այսինքն 3,000 զուլայի չ'ուի: Որ կը նշանակէ թէ—տուփ գլուխ հինգ զուլայ շահ հաշուելով—օրը միայն 20 տուփ սպասուած ունեցած են:

— Պարսկաստանէ գրուած նամակ մը կը տեղեկանանք թէ, այդ

թէ ըսած աղջկէս լուր մը չ'ունիք: — Ամենեւ ին... — Զարմա՛նք: — Քաղաքն է եղեր: — Այո՛, եւ ինչի ըսին թէ անպատշաճ հոս կը գտնուի: — Եթէ հոս ըլլայ, ինչու պիտի պահեմ, Տէր հայր: — Ծշմարիտ է: Ինչու պիտի ուզէք ինչ պահելու... եւ հոգեւոր հայրդ եմ, աղջիկս:

Ու Գահանան ոտքի ելնելով ներողութիւն խնդրեց եւ մեկնեցաւ տունէն, գաղանի մը պէս որ մտած տեղը չ'որ ոսկոր մը անգամ չ'անցնի ձեռքը ու պարանց կը դառնայ...:

Երբ հրէշատիպ եկեղեցականը փողոցէն հեռացաւ, Լուսիա Տիւղարին ու Լաւիզարին քով գնաց եւ եղելութիւնը պատմեց:

— Ա՛խ, մեր տունը մոխիր դարձնող այդ Գահանան, քուրիկներս, հառաջիկ գեղանի Տիւղար, որուն խօրոտ աչքերէն սկսան վար թափուել արցունքի ամենազառն կաթիլներ:

— Գիտեմ, քոյրս, ընդհատեց Լուսիա: Այդ հրէշին ինչ դաւաճան լինելը յայտնի է ինձի... բաւական է որ անունն իմացայ:

— Ո՛ր գնաց... հարցուց Լաւիզար: — Ո՛վ գիտէ... միայն թէ այս տունէն մէջ չ'եմ ուղեր մնանք: Պէտք է ասկից հեռանանք... որովհետեւ կը կասկածիմ թէ մատնութիւն մը կայ... դաւադրութիւն մը կը դառնայ մեր շուրջը: Ա՛խ, Աստուած իմ... երանի՛ թէ այս գիշերը Վանականի հասնէր ու Տիւղարը տանէր հետ... կը մնայինք եւ եւ դուռն, Լաւիզար, մենք ալ տեղ մը կը պահուէինք...:

Մանկամարդ աղջիկները, սարսափով մը լեցուած, ինչ ընկիւններն չէին գիտեր: Ո՛րչափ որ կը ջանային զիրար մխիթարել, որչափ որ իրարմէ կը ջանային ծածկել իրենց զգացածները, նորէն չէին կրնար Տիւղար ձակապարտ մը զանոնք իրարու կայած ըլլալով, այնքան խորապէս կըզգային իրարու վրայ հասած թշուառութեան դառնութիւնն, ինչպէս հարազատ քոյրեր:

Օրը կամաց կամաց կը մթնէր: Մանկամարդ աղջիկները հոգեկան ազգամաք շարունակ դուռնին յառած էին իրենց աչքերը եւ կարծես թէ անպատշաճ ընկերակցութեան մը կը սպասէին, որ կուշանար, որ գիշերը կը հասնէր անհամար չարչկութիւններու մէջ: Գիշերուան ժամը երկուքին կը մօտենար: Արդէն ճաշելու անգամ չ'ի գացին: Լուսիա ստիպուած էր բաժնուիլ, որովհետեւ Մեծ-հայրը տանելու եկած էր գիշերը:

— Մեծ-հայր, պէտք է Լաւիզար ու Տիւղար այստեղ մնան, ըսաւ Լուսիա հաստատ ու վճռական ձայնով մը: Նոյն իսկ այս գիշերը ճար մը տես եւ փոխադրե՛ք զանոնք:

Ու պատմեց եղելութիւնը, ցոյց տալով անկից առաջ գալիք ծանր հեռանքը:

— Կեցի՛ր, աղջիկս, միմեջեք բարի ծերունին: Հիմակ ուղարկե՛ք պէս պիտի կարգադրեմ:

Եւ աճապարանքով մը դուռս ելաւ տունէն, հազիւ թէ քարոզ մը ան-

ցած էր, ահա ներս մտաւ մուրաքցիանի հագուստով ծերունի մը, որ Լաւիզարին հայրը՝ Միւրօ ախպարն էր:

— Ա՛խ, ինչ բարեբաղդութիւն, գոչեց Լուսիա ու՛ առանց ժամանակ կորսնցնելու, խնդրեց Միւրօ ախպարէն որ Լաւիզարն ու Տիւղարը վայրկեանպէս հեռացնէ քաղաքէն:

Միւրօ ախպար չ'ըստանց՝ երկու աղջիկներու հետ դուռս ելաւ տունէն յետնակողմէն եւ ուղղակի Վարագայ վանքը տանող ճամբան բռնեց...:

Ժամ մը վերջը Լուսիային Մեծ-հայրը եկաւ:

— Անո՛նք գացին... նկատել տուաւ Լուսիա:

— Ո՛ր գացին, հարցուց ծերունին:

— Միւրօ ախպար հետը մեկնեցան:

— Այդ աւելի աղէկ, միմեջեք ծերունին ու Լուսիան առած իր տունը վերադարձաւ:

(Շարունակելի)

Печ на Хр. Н. Войниковъ—Варна